

ՇՈՒԾԱՆ ԶԱՏՈՒՆՑ

«Գլանոր» համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի
մամուլի ու տեսության ամբիոնի ասպիրանտ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԶՆՀԱԼԻ ՏԱՐԻՆԵՐԻ «ԱՎԱՆԳԱՐԴՈՒՄ»

1950-60-ական թվականներին մեծ վերելք ապրեց հանրապետության ժողովրդական կրթությունը: Արդեն 1965-ին դպրոցների թիվը հասնում էր 1500-ի, ուր սովորում էին 593 հազար աշակերտներ: 1956-60-ական թթ. կրթության կարևորագույն ուղղություն դարձավ պոլիտեխնիկական կրթության իրազործումը հանրակրթական դպրոցներում, իսկ նոր առարկաները, ինչպիսիք էին՝ հանրօգուտ աշխատանքը, տնարարությունը, ձեռքի աշխատանքը, որոնք աշակերտներին հնարավորություն էին տալիս տիրապետելու տարրեր մասնագիտությունների նորություններին, աշխատանքային և մասնագիտական փորձ ձեռքելու դեռ դպրոցական նստարանից սկսած:

Մեծ ուշադրություն դարձվեց միջնակարգ մասնագիտական կրթությանը և արդեն, 1965-ին՝ Հայաստանում տեխնիկումների թիվը հասավ 42-ի, ուր սովորում էին 23 հազար պատանիներ ու աղջկներ: Ընդլայնվեց երեկոյան ուսուցման ցանցը միջնակարգ մասնագիտական ուսումնարաններում, որտեղ բացվեցին նաև երեկոյան բաժիններ:

Նոր ուսումնական մասնաշենքեր կառուցվեցին Երևանի պետական համալսարանի, պոլիտեխնիկական, գյուղատնտեսական ինստիտուտների համար: Վեր բարձրացան նաև ուսանողական հանրակացարանների մասնաշենքերը: Արդեն 1959-ին Լենինականում և Կիրովականում բացվեցին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղերը:

1967-ին հանրապետության բուհերում դասախոսում էին 2865 մասնագետներ, որից 190-ը դրվագ-այրովեսորներ, 1120-ը գիտության թեկնածուներ: Նոյն թվականին հանրապետության բուհերում սովորում էին 44 հազար ուսանող՝ 134 մասնագիտությունների գծով¹:

Հայաստանում դպրոցների ընդլայնված ցանցը ամենաբարձր ցուցանիշը ուներ ողջ ՍՍՀՄ-ում: Օրինակ, մեր հանրակրթական դպրոցների 70 տոկոսը արդեն 1980-ին միջնակարգ էր, շարունակ-

վում էր ընդլայնվել երեկոյան դպրոցների ցանցը, որը, սակայն, եթե հայրենական պատերազմից հետո անհրաժեշտություն էր, ապա դրա կարիքն արդեն չկար այս շրջանում, որովհետև դրանցում ուսուցումը մեծ մասամբ ձևական բնույթ էր կրում: Դեռևս անբավարար էր բարձրորակ մանկավարժական կադրերի պատրաստման գործը, հատկապես գյուղական դպրոցներում, որտեղ մասնագիտների կարիքը շատ էր զգացվում: Միայն էին կազմվում ուսումնական ծրագրերը, որոնք պարունակում էին կուսակցական ու պետական օրգանների հրահանգները, որտեղ հաշվի չէին առնվում տեղական, ազգային առանձնահատկությունները: Մեծ աշխատանք տարվեց բուհերում գիտության խրախումնական ուղղությամբ: Նոր լաբորատորիաներ բացվեցին Երևանի պետական համալսարանում, բժշկական, պոլիտեխնիկական ինստիտուտներում, բացվեցին նաև գիտահետազոտական նոր բաժիններ: Զավեշտական էր, որ բոլոր բուհերում, անկախ նրա ուղղվածությունից, պետք է անպայմանորեն անցնեին ԽՍՀՄ պատմությունը, Մարքսինյան փիլիսոփայությունը, գիտական կոմունիզմ և արեիզմը: Ավելին, գիտական կոմունիզմը պետական քննություն էր բոլոր բուհերում:

«Զարգացած սոցիալիզմի սոցիալական կարևոր առանձնահատկություններից մեկը, - գրում էր Ռ. Մովսիսյանը, - ՍՍՀՄ ազգերի, ազգությունների և ազգային խմբերի ներդաշնակ, բարեկամության ու համագործակցության հարաբերություններն էին: Իսկ սրան, ըստ հեղինակի՝ կուսակցությունը հասել էր հետևողականորեն կենսագործելով լենինյան ազգային ծրագրը, ապահովելով բոլոր ազգերի տնտեսական, կուլտուրական, սոցիալ-քաղաքական և գաղափարական ներդաշնակ գարգացումը ստեղծելով նրանց միջև իրական հավասարությունն»²:

Ժողովրդական կրթության վիթխարի ծավալի մասին է գրում նաև Լ. Բրեժենևը, ըստ որի հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագի-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տական և բարձրագույն ուսումնական հաստատություններում այդ բվականներին սովորում էին 60 միլիոն մարդ³:

Կուսակցության առաջադրանքներն անշեղորեն կատարելագործելով միշտ էլ աչքի են ընկել Երևանի պետական համալսարանի կոմերիտականները: Նրանք միշտ էլ հանդես էին գալիս նոր նախաձեռնություններով, ձեռք բերում մասնագիտական հարուստ գիտելիքներ: Ահա ինչու համալսարանի կոմերիտականներից շատերը հետազյում դարձան հմուտ կոմերիտական և կուսակցական աշխատողներ: Այս առիթով ահա, ինչ է գրում ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը. «Գաղափարական-քաղաքական աշխատանքի և կոմունիստական գիտակցության ձևավորման հարցերը կուսակցությունը համարել է սոցիալիստական հասարակարգի նոր էտապի կարևորագույն հարցեր, նշելով, որ կոմունիզմի կառուցման գործը անկարելի է առաջ տանել առանց իրեն՝ նոր, բազմակողմանի գարգացման, առանց մարդկանց կուլտուրայի, կրթության, հասարակական գիտակցության բարձրացման»⁴:

Նոր մարդու աշխարհայացքի ձևավորման գործում առաջնակարգ դեր ունեին մանկապարտեզները, պիտույքներական կազմակերպությունները, դպրոցները, միջնակարգ մասնագիտական հաստատությունները, բուհերը: Մամուլը հետևողականորեն անդրադարձել է այս բոլոր հասարակությանը հուզող հարցերին, սրտացավ վերաբերմունք դրսորել այս բոլորի նկատմամբ: Նման վերաբերմունքի արգասիք է Մանդալյանի «Մայրական հոգատար ձեռքերում» հոդվածը՝ մայրաքաղաքի Դիմիտրովի անվան մստրմանկապարտեզի մասին, որի աշխատողները մայրական սիրով ու հոգատարությամբ են շրջապատել բոլոր 300 սաներին⁵:

«Ավանգարդը» բազմաթիվ այցեր է կատարել դեպի հանրապետության պիտույքներական ճամբարներ, խոսել կատարված լավ գործերի, հոգսերի ու թերությունների մասին, որոնք շուտափույթ լուծում են պահանջել: Մասնավորապես «Ծաղկաձորի ծաղիկները» Մ. Գալշոյանի ակնարկը նվիրվել է պիտույքներական ամռանը: Մարդկության «ծաղիկները»՝ մեր հրաշք մանուկները իրենց անհոգ հանգիստն են անցկացնում ծաղիկների գրկում: Նրանք իսկապես շրջապատված են հոգատարությամբ:

Պիտույքիայի ծննդյան օրվա կապակցությամբ «Պիտույքների հյուրն էր ՀԿԿ Կենտկողմի

առաջին քարտուղար Յա. Զարուբյանը» հոդվածն էր, որին զերմորեն են ընդունել մեր երեխաները, հետաքրքրվել հանրապետության առաջնահերթ խնդիրների մասին, նաև ներկայացրել իրենց պահանջները⁶: Իսկ մի քանի համարներ անց «Պիտույք կանչը» քառասուն տարեկան է» հոդվածն է, և ՀՍՍՀ Գերագույն խորհրդի հրամանագիրը՝ թերթը պատվորով պարզեատրելու մասին՝ երեխաների կոմունիստական դաստիարակության գործին ակտիվորեն մասնակցելու համար:

Թերթն ուշադրության կենտրոնում է պահել հանրակրթական դպրոցների առօրյան՝ տեղ տալով նաև այնպիսի կարևոր հարցերի, ինչպիսին էր դպրոցականի օրվա ուժիմը: Այս թեմային է անդրադարձել քիչիկ Ռ. Փարսադանյանը իր բժշկական գրույցում, որն օգտակար էր ինչպես մանկավարժական կոլեկտիվներին, այնպես էլ ծնողների համար⁷:

«Մոտենում են քննությունները» հոդվածն անդրադարձել է տարեվերջի ավարտական, փոխադրական և հասունության վկայականների քննություններին, այսինքն, երբ դպրոցները թևակոյում են ուսումնական տարվա ամենապատասխանատու շրջան, երբ հաշիվ են տալիս ոչ միայն աշակերտները, այլ նաև ուսուցչական կոլեկտիվը, ամբողջ դպրոցը⁸:

Ս. Անթոսյանի «Աշակերտներին զինել կայուն գիտելիքներով» հոդվածը պատվիրված է: Բանն այն է, որ հեղինակը բուհերի ընդունելության քննությունների հայոց լեզվի և գրականության հանձնաժողովի անդամ է, և այն եզրակացնությանն է հանգել, որ հանրապետության որոշ դպրոցներում անհանդուրժելիորեն վատ են մայրենի լեզվի և գրականության ուսուցումը: Ցուրաքանչյուր ուսուցիչ պետք է լուրջ հետևողական անհի այս հոդվածի փաստերից և անպայմանորեն ձգտի իրեն վատահած աշակերտներին զինել բարձր գիտելիքներով⁹:

«Կանաչ ճանապարհ երկարօրյա դպրոցներին» հոդվածն այն կարծիքն է արտահայտում, թե դրանք դրական արդյունք են տալիս, համախմբվում են երեխաների կոլեկտիվները, բարելավվում են առաջադիմությունը ու կարգապահությունը, ծնողներին օգնում են իրենց երեխաներին դաստիարակելու և խնամելու գործում:

Թերթն ուշադրության կենտրոնում է պահել նաև բաներիս դպրոցների հարցը: Այս թեմային է անդրադարձել Ս. Գևորգյանը «Ինչ է կատարվում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

համար 20 երեկոյան դպրոցում» հոդվածում, որ հեղինակը սրտի ցավով է արձանագրում, որ դասերին չեն ներկայանում աշակերտների կեսից ավելին, այնինչ բոլորը ներկաներ են ստանում: Միջանցքներում ծխում են, աղտոտում, դաս չեն պատասխանում ոչ մեկը, չեն օգտագործվում դիտակտիկ պարագաներ, լաբորատորիաներ ոչ ոք չի հաճախում¹⁰:

Լուսավորության մինիստրության դպրոցների վարչության տեսուչ Վ. Գրիգորյանի «Լուրջ ուշադրություն երեկոյան դպրոցներին» հոդվածը նույնական այդ դպրոցների բարձիքողի վիճակի մասին է, իսկ հոդվածագրի եզրակացությունը մեկն է՝ ձեռք ձեռքի պիտի տան կոմերիտական կազմակերպությունները, հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվները և դպրոցների մանկավարժները, այլապես դրական արդյունք սպասելն անհնարին է¹¹:

Հանրապետության տեխնիկումների, պրոֆտեխնիկական ուսումնարանների հոգսերի և առօրյայի մասին «Ավանգարդը» ընդարձակ տեղ է հատկացրել: Համարյա բոլոր համարներում թերթը շոշափում է դպրոցների պոլիտեխնիկացման հարցեր՝ երկրի տնտեսությանը երիտասարդ ու բանիմաց կաղըեր տալու ակնկալիքով: Թերթը չի մոռացել դպրոցների արհեստանոցների խնդիրները, որոնք պետք է կահավորել գիտության վերջին խոսքով, որպեսզի դպրոցական կամ տեխնիկումի ուսանողը մասնագիտական հմտություն ստանա հենց դպրոցում կամ տեխնիկումում:

Մ. Մուրադյանի «Նրանք իրավերի չեն սպասում» ակնարկը Հոկտեմբերյանի գյուղատնտեսական տեխնիկումի շրջանավարտ Անուշավան Վարդանյանի մասին է, որը 24 տարեկանում արդեն դարձել է Ապարանի շրջանի թթուցուր գյուղի կոլտնտեսության կոմպլեքսային բրիգադի բրիգադավար, որի բոլոր 75 անդամները վստահում են երիտասարդ մասնագետին¹²:

Թերթը հայտնում է, որ Քաջարանի համար 16 պրոֆտեխնուսումնարանը տվել է իր 1000-երրորդ շրջանավարտը: Ուսումնարանը արտադրություն է ուղարկում որակյալ հյուսներ, ներկարարներ, քարտաշ-որմնադիրներ, փականագործներ, էլեկտրաեռակցողներ, որոնք բոլորն էլ իրենց արտադրական պրակտիկան անցել են Ազգարակի պղնձամոլիբդենային կոմբինատում:

Թերթի 1964 թ. 130-րդ համարը ամբողջությամբ նվիրվել է հանրապետության պրոֆտեխնի-

կական ուսումնարանների առօրյային, հոգսերին ու նվաճումներին:

Վլադիմիր Մուրադյանի «Խոկ ու՞ր է այդ կոլեկտիվը» հոդվածը Երևանի գյուղմեխանիզացիայի տեխնիկումի ուսանող Ֆրիկ Մարտիրոսյանի մասին է, որին խույզանության համար վտարել են տեխնիկումից, սակայն նա բողոքում է տարբեր ասյաններ, թե վտարելու փոխարեն կոլեկտիվը պիտի վերադաստիարակեր, այնինչ կոմերիտական կազմակերպությունը, տեխնիկումի ղեկավարությունն ընտրել են հեշտ ճանապարհը¹³:

«Մի նամակի հետքերով» թերթը տպագրել է Հենրիկ Աբրահամյանի «Որտե՞ղ է ձեր խիղճը» հոդվածը, որ նա խոսում է Գագարին ավանի համար 21 գիշերօրիկ դպրոցի ուսուցչուի Էվելինա Սարգսյանի նամակի մասին: Նա ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը, եկել է Հայաստան, սակայն նրա նկատմամբ անմարդկային վերաբերմունք են ցուցաբերում դպրոցի տնօրեն Սուրեն Անտոնյանը և ողջ ուսուցչական կոլեկտիվը¹⁴:

Վ. Շողերյանի «Անուացության տրված ինստիտուտը» հոդվածը ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի մասին է, որտեղ չնայած ինչ-ինչ հաջողություններ արձանագրվել են, բայց չափազանց շատ են նաև թերությունները: Օրինակ, նրանց աշխատակիցները շրջաններ են մեկնում 10 – օրյա գործուղման, սակայն այն ավարտում են մեկ օրում, նախ՝ վարձատրվելով 10 օրվա համար, առանց մեթոդական օգնություն տեղերում ցուցաբերելու, առանց բաց դասեր, դասալսումներ կազմակերպելու:

«Ավանգարդը» բուհական հարցերը համարում է առաջնային, քանի միայն սրանց արժանի շրջանավարտներն են, որ ապահովելու էին երկրի առաջադիմությունը բոլոր բնագավառներում: Թերթը տպագրել է Ռաֆայել Արամյանի «Ուսանողների մոտ» հոդվածը Երևանի պետական համալսարանի երկրորդ հանրակացարանի ուսանողական բաղամասի առօրյայի մասին, անդրադարձել ուսանողներին հուզող բազմաթիվ հարցերի:

Զերմ ու սրտառուչ է Լյուդվիգ Կարապետյանի «Քննությունները բուհերում» հոդվածը, որ նա խոսում է Երևանի պետական համալսարանի բանափրական ֆակուլտետի հայց լեզվի և գրականության բաժնի ուսանողներ Հենրիկ Ավետիյանի, Ռոբերտ Արզումանյանի, Ժենյա Քալանթարյանի, Ալբերտ Խառատյանի և այլոց գերա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

զանց գնահատականների մասին:

«Կապը արտասահմանի հետ» վերտառության տակ թերթը հաղորդում է, որ Երևանի բժշկական ինստիտուտի հյուրն էր ԱՄՆ-ի Տեխաս նահանգի համալսարանի պրոֆեսոր Ա. Փախչանյանը, որը ծանրանում էր ինստիտուտի կյանքին ու նվաճումներին: Նա դասախոսություն է կարդացել «Էքսպերիմենտալ բժշկության և բիոլոգիայի մի քանի արդի հարցերի շուրջ» թեմայով, ցուցադրել գիտական մի քանի կարճամետրաժ կինոնկարներ¹⁵:

Եվ չնայած կուսակցության ջանքերին երիտասարդության ու աշխատավորության կուլտուրկենցաղային սպասարկման աշխատանքի պայմանները բարելավելու, նրանց հանգիստը լավագույն ձևով կազմակերպելու ուղղությամբ, բայց

դեռևս բավարար չէին երիտասարդության շրջանում կատարվող դաստիարակչական աշխատանքները, շրջանավարտներից շատերը խուսափում էին գյուղ աշխատանքի մեկնել, որովհետև գյուղերում նրանց համար անհրաժեշտ պայմաններ չկային, ցածր էր վարձատրությունը:

Չնայած ձևիալի տարիներին բացախոսության տարրեր նկատվում էին, սակայն չէր մոռագել նաև հին ավանդույթը՝ խորհրդային գրաբննությունը, որի պատճառով էլ շատ հաճախ թերթի աշխատակիցները չէին կարողանում բացորոշ արտահայտվել, սակայն ի պատիվ նրանց և թերթի գլխավոր խմբագիր Լորիս Կրոյանի կարողանում էին ընթերցողներին ներկայացնել նաև օբյեկտիվ փաստեր, որը, թեև մեծ դժվարությունների հետ էր կապված:

¹Տե՛ս Կարապետյան Մ., Գևորգյան Հ. «Խորհրդային Հայաստանը 1920-1991թվականներին», Եր., 2007թ., էջ 409:

²Տե՛ս Մովսիսյան Լ. «Կուսակցության դեկավարների աճը կոմունիստական շինարարության արդի էտապում», Երևան, 1972թ., էջ 237-238:

³Տե՛ս Բրեժենի Լ. «Սոցիալիզմի մեծ հաղթանակի 50 տարին», Եր., 1967թ., էջ 40:

⁴Տե՛ս Սիմոնյան Հր. «Կոմունիստական դաստիարակչության մի քանի հարցեր», Եր., 1967թ., էջ 40:

⁵Տե՛ս «Ավանգարդ», 1965թ. համար 9:

⁶Տե՛ս Նույն տեղում, 1965, համար 60:

⁷Տե՛ս «Ավանգարդ», 1956, համար 23:

⁸Տե՛ս «Ավանգարդ», 1956, համար 50:

⁹Տե՛ս Նույն տեղում, համար 99:

¹⁰Տե՛ս Նույն տեղում, 1957, համար 44:

¹¹Տե՛ս Նույն տեղում, 1965, համար 22:

¹²Տե՛ս «Ավանգարդ», 1961, համար 68:

¹³Տե՛ս Նույն տեղում, 1960, համար 60:

¹⁴Տե՛ս Նույն տեղում, 1964, համար 46:

¹⁵Տե՛ս «Ավանգարդ», 1961, համար 28: